ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մայիսի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՄ-102-12.04.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 524 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ԽԾ-102-12.04.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերյալ ունի որոշակի դիտարկումներ և գտնում է, որ վերջինիս ընդունումն առաջ կբերի մի շարք խնդիրներ: Այսպես՝

1. 1-ին հոդվածով առաջարկվող՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու առավելագույն տարիքի փոփոխությունը հիմնավոր չէ, քանի որ հիմնավորման մեջ նշված չէ խնդրի ծագման պահանջը, բացի այդ պրակտիկայում չեն արձանագրվել դեպքեր, երբ ռազմաուսումնական հաստատություն ընդունվելու դիմում է ներկայացվել 23 տարին լրացած անձանց կողմից:

2. 2-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 2.1-ին կետի վերաբերյալ հարկ է նշել, որ երկքաղաքացիություն ընդունած անձանց մասով ներկայացված առաջարկը խտրական վերաբերմունք է առաջացնում սկզբնապես Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ չընդունած անձանց միջև, քանի որ եթե այլ պետության քաղաքացիություն չընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար օրենքով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտավորության ժամկետը սահմանված է 24 ամիս, իսկ այլընտրանքային ծառայությանը՝ ըստ տեսակների, համապատասխանաբար 30 և 36 ամիս, ապա այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար օրենքով սահմանված պարտականությունն իրացված լինելու ժամկետները փաստացի նախատեսվում են ավելի կրճատ՝ համապատասխանաբար 12 ամիս և 18 ամիս: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ կառաջանան ռիսկեր, Հայաստանի Հանրա-

պետության քաղաքացիների կողմից, Հայաստանի Հանրապետությունում պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու:

3. Հիմնավորված չէ երկու կամ ավելի երեխա ունեցող անձանց տարկետման իրավունքի փոխարինումը պարտադիր զինվորական ծառայությունից ազատման իրավունքով, ինչպես նաև նախատեսումը, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման իրավունք ստացած զորակոչիկն ընտանիքի անդամի մահվան դեպքում ենթակա է լինելու զորակոչի ընտանիքի անդամի մահվան օրվանից մեկ տարին լրանալուց հետո հաջորդող զորակոչին: Վերջին դրույթի հետ կապված առկա է թերկարգավորում այն դեպքում, երբ մահվան պատճառով տարկետման հիմքի վերացումը ծագում է զորակոչիկի 26 տարին լրանալուց հետո, որի պարագայում չլուծված է մնում նրա հետագա կարգավիճակի հարցը, քանի որ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ կետում հստակ սահմանված է, որ երկու երեխա ունեցող զորակոչիկին տարկետում տրվում է մինչև նրա 27 տարեկանը, որը լրանալու հիմքով զորակոչիկն ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, իսկ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն տարկետման հիմքերը վերանալու դեպքում զորակոչիկը ենթակա է զորակոչման հիմքի վերացման օրվան հաջորդող զորակոչի ժամանակ:

4. 3-րդ հոդվածով լրացում է կատարվում օրենքի 22-րդ հոդվածում՝ սահմանելով նպատակային ուսումնառության համար տարկետում տրամադրելու նոր հիմքեր:

Ի ապահովումն հիշյալ լրացման՝ նախագծով ներկայացվում է նաև հավելված՝ ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագրի մասին, որում սահմանվում են հասկացություններ և տրվում են որոշակի կարգավորումներ:

Հարկ է նշել, որ ներկայացված կարգավորումները լիարժեք չեն, մասնավորապես, դրանցում բացակայում են մրցութային ծրագրով մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ուսումնառության հետ կապված հիմնական ընթացակարգային դրույթներ և այլ կարգավորումներ: Մինչդեռ, հիշյալ հավելվածի կարգավորման առարկայի սահմանումը

պետք է հնարավորություն ընձեռի պատկերացում կազմել դրանով կարգավորվող հարաբերությունների և հարցերի առանցքային ոլորտների մասին: Նախագծով ներկայացված հավելվածը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմելու կարգավորվող հարաբերությունների առանցքային ոլորտների մասին, քանի որ հավելվածով նախատեսված են միայն հասկացությունների սահմանումներ և ոչ հստակ կարգավորումներ, օրինակ՝ սպայական կոչում ստանալու, աշխատանքի անցման, պայմանագրի կնքման և դրա խզման, քաղաքացիների վերաբերյալ որոշակի սահմանափակումների կիրառման և այլնի վերաբերյալ, ինչը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով քննարկվող հոդված-ները թողնել անփոփոխ:

Նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա համապատաս-խան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» N 430-Ն որոշման մեջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

10 մայիսի 2019 թվականի N 524 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-102-12.04.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մայիսի 10
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Խ-102-12.04.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասում «23» թիվը փոխարինել «27» թվով:

Հոդված 2.

1) Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով.

2) Նույն մասը լրացնել նոր 2.1-ին եւ 4-րդ կետերով՝

«2.1) ընդունել է երկքաղաքացիություն եւ քաղաքացիության մյուս երկրում ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այդ պետության զինված ուժերում կամ այդ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն.

4) ունի երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների:».

3) Նույն հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3.

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն, եթե նա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքում է քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝

ա) ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու եւ ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում եւ պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին: Սույն կետի համաձայն՝ քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 26 տարին լրանալու օրը.

բ) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կողմից սահմանված մասնագիտությունների ցուցակով մրցութային կարգով մասնագիտական ոլորտներում եւ պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին.

գ) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի պահանջներին համապատասխան մրցութային ծրագրով մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում ուսումնառությունը սույն օրենքի հավելված 1-ով առաջարկվող «Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագրի» շրջանակներում շարունակելու մասին:»:

Հոդված 4.

1) Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) Նույն հոդվածը լրացնել նոր 9-րդ մասով՝

«9. Եթե քաղաքացու մոտ վերացել են տարկետում ստանալու համար հիմք հանդիսացած հանգամանքները հարազատի/ընտանիքի անդամի մահվան պատճառով, ապա քաղաքացին կարող է զորակոչվել, ոչ շուտ քան մահվան դեպքի մեկ տարին լրանալուց հետո հաջորդող զորակոչը:»:

Հոդված 5.

Օրենքը լրացնել Հավելված 1-ով՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՌԱՄԶԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սահմանվող հասկացություններ

1. **Հայաստանի Հանրապետության ռամզաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագիր (այսուհետ՝ ծրագիր)՝** Հայաստանի Հանրապետության ռամզաարդյունաբերական համալիրի եւ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների համատեղ ուսումնական ծրագիր՝ մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի եւ հայցորդության համար,

2. **Մագիստրոսական ծրագիր՝** ծրագրի շրջանակներում մագիստրատուրայի ուսումնական փուլը,

3. **Ասպիրանտական ծրագիր՝** ծրագրի շրջանակներում ասպիրանտուրայի ուսումնական փուլը,

4. **Հայաստանի Հանրապետության ռամզաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագրի հավակնորդ՝** «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված՝ տարկետման իրավունք ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

5. **Ընդունող հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտպանության եւ կրթության ոլորտներում միասնական քաղաքականություն սահմանող եւ իրականացնող լիազոր մարմինների համատեղ որոշմամբ ստեղծված մարմին, որը սահմանում է ծրագրի ընդունելության քննության անցկացման կարգը եւ կազմակերպում քննությունները,

6. **Ծրագրի մասնակից՝** ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպված եւ սահմանված կարգով քննությանն առավելագույն արդյունքներ ցուցաբերած եւ ծրագրին մասնակցելու իրավունք ստացած Հայաստանի Հանրապետության քաղաքացի,

7. **Ընթացիկ ուսումնական հաստատություն՝** ուսումնական հաստատություն, որտեղ սովորում է հավակնորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացին:

Ծրագրի նկարագիրը

Հայաստանի Հանրապետության ռամզաարդյունաբերական համալիրը եւ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններն իրականացնում են համատեղ ուսումնական ծրագիր, որը նպատակ ունի նշված ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների գիտական պոտենցիալն օգտագործել ռազմաարդյունաբերական համալիրում՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բարձր տեխնոլոգիաների

եւ նորագույն գիտատեխնիկական ձեռքբերումների կիրառմանը, եւ մյուս կողմից, ստեղծել հարթակ երիտասարդ գիտնականների գիտական նոր ձեռքբերումների եւ շարունակական զարգացման համար:
Մագիստրոսական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվող թեմաներն առաջարկվում են ռազմաարդյունաբերական համալիրի պահանջներին համապատասխան, որի շրջանակներում էլ պաշտպանվում է մագիստրոսական ատենախոսությունը:
Մագիստրատուրայում ուսումն ավարտելուց հետո ուսանողը հնարավորություն է ստանում ուսումը շարունակել նույն ծրագրի շրջանակներում՝ ասպիրանտուրայում, գիտական աշխատանքի թեման համապատասխանեցնելով ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման արդիական պահանջներին:
Ծրագրին մասնակցելու համար հավակնորդ քաղաքացիները, ովքեր ուսման ընթացքում ցուցաբերել են բարձր առաջադիմություն՝ նվազագույնը «լավ» գնահատականներով, մասնակցում են ընդունող հանձնաժողովի կողմից կազմակերպված քննությանը: Առավելագույն միավորներ հավաքած հավակնորդները դառնում են մագիստրոսական ծրագրի մասնակիցներ: Մյուս հավակնորդներն անցնում են պարտադիր զինվորական ծառայության, այդ թվում՝ ըստ ցանկության, «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակներում:
Մագիստրոսական ծրագրի մասնակիցները, շարունակելով համարվել ընթացիկ ուսումնական հաստատության մագիստրատուրայի ուսանող, ստանում են կրտսեր սպայական կոչում եւ աշխատանքի անցնում ռազմաարդյունաբերական համալիրում՝ պայմանագրային հիմունքներով՝ առնվազն նվազագույն սպայական աշխատավարձով:
Մագիստրոսական ծրագրի ավարտից հետո լավագույն մագիստրոսները հնարավորություն են ստանում շարունակել գիտական գործունեությունը՝ որպես ասպիրանտ՝ ասպիրանտական ծրագրի շրջանակներում: Ասպիրանտուրայի ընդունելության կարգը սահմանվում է համապատասխան իրավական ակտով՝ լիազոր մարմնի կողմից: Ծրագրում ընգրկված քաղաքացիների համար սահմանվում է աշխատավարձ՝ միջին սպայական աստիճանի առավելագույն աշխատավարձին հավասար:
Ասպիրանտական ծրագրում չընդգրկված քաղաքացիներն անցնում են պարտադիր զինվորական ծառայության, այդ թվում՝ ըստ ցանկության, «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակներում:
Ծրագրի շրջանակներում գիտական գործունեության ընթացքում մասնակցի կողմից կատարված բոլոր գիտական աշխատանքները եւ մտավոր սեփականության օբյեկտները համարվում են Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի սեփականություն: Մտավոր սեփականության նշյալ օբյեկտների նկատմամբ դրանք ստեղծող անձիք պահպանում են ոչ գույքային իրավունքները, ինչպես նաեւ ստանում 25% հոնորար ցանկացած հատուցվող գործարքից, որի առարկան են այդ օբյեկտները: Ցանկացած դեպքում դասակարգված տեղեկատվության գաղտնիությունը պահպանվում է պայմանագրի ողջ գործողության ընթացքում եւ դրա լուծումից հետո:
Ասպիրանտական ծրագրի ավարտին, մասնակիցները պաշտպանում են ատենախոսություն: Ատենախոսությունը չպաշտպանած մասնակիցներն անցնում են պարտադիր զինվորական ծառայության, այդ թվում՝ ըստ ցանկության, «Պատիվ ունեմ» ծրագրի շրջանակներում:
Ատենախոսությունը պաշտպանած քաղաքացիներն իրավունք ունեն միակողմանի խզել պայմանագիրը ռազմաարդյունաբերական համալիրի հետ: Քաղաքացիների նկատմամբ

կարող են կիառվել որոշակի սահմանափակումներ՝ ըստ աշխատանքի ընթացքում առնչված գաղտնի տեղեկությունների կարեւորության: Քաղաքացին հնարավորություն է ստանում հետագայում շարունակել գիտական գործունեությունը ռազմաարդյունաբերական համալիրում՝ կնքելով նոր աշխատանքային պայմանագիր՝ նոր պայմաններով:

Հոդված 6.

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունում է համապատասխան ենթաօրենսդրական ակտեր՝ «Հայաստանի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական ծրագրի» իրագործման համար:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017թ. նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություն եւ լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով՝

1. Օրենքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ զորակոչի ենթակա են 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչեւ 27 տարին լրանալը, ինչպես նաեւ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցած ու պահեստազորի սպայական կազմ որակավորված արական սեռի քաղաքացիները՝ մինչեւ 35 տարին լրանալը: Ուստի, նախագծով առաջարկվում է չսահմանել առավել խիստ տարիքային սահմանափակում ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության համար:

2. Օրենքի 21-րդ հոդվածում առաջարկվում է կատարել լրացում, որը կստեղծի բարենպաստ պայմաններ Հայաստանի Հանրապետություն վերադարձող այն քաղաքացիների համար, ովքեր ընդունել են երկրորդ քաղաքացիություն եւ քաղաքացիության մյուս երկրում ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել են այդ պետության զինված ուժերում կամ այդ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս կրել են այլընտրանքային ծառայություն: Այսպիսով, այն երկքաղաքացին, ով արդեն իսկ ծառայել է մեկ պետությունում, Հայաստանի Հանրապետությունում եւս ծառայության անցնելու պարտավորություն չի կրելու:

3. Առաջարկվում է նաեւ բանակին անհրաժեշտ մասնագիտությունների գծով թույլատրել բակալավրի աստիճանի ձեռքբերում, ինչից հետո զորակոչվելիս բանակում այդ անձիք կարող են իրականացնել բանակին անհրաժեշտ՝ իրենց մասնագիտական ոլորտի խնդիրների լուծում:

4. Ներկայիս օրենսդրությամբ սահմանված է պարտադիր զինվորական ծառայությունից ինչպես ազատման, այնպես էլ տարեկետման հիմքերը, իսկ Օրենքի 24-րդ հոդվածով ամրագրված են այն հիմքերը, որոնց պարագայում անձն ազատվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից՝ ընտանեկան պայմաններից ելնելով: Այսպես, առաջարկվող լրացմամաբ հստակ կերպով ամրագրվում են այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում անձը ոչ թէ ստանում է տարեկետման իրավունք, այլ տվյալ ընտանեկան պայմանները համարվում են բավարար՝ վերջինիս պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով ազատումը թույլատրելի ճանաչելու համար:

5. Ներկայացված նախագծով առաջարկվող մոտեցումը միտված է գիտական եւ նորարարական հայեցակետերի զարգացմանը. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից առաջարկվող հատուկ ծրագիրը, որը կթույլատրի մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում շարունակել կրթությունն այնպիսի ձեւաչափով, ինչը մի կողմից, կխրախուսի, ուսանողներին զբաղվելու գիտությամբ, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերին հնարավորություն կտա օգտագործելու գիտական համապատասխան պոտենցիալը: Հանրապետության բուհ-երում տարկետման իրավունք ունեցող տեղեր են սահմանվել

պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) եւ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով՝ 1826 տեղ, առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման, պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով՝ 137 տեղ, որը կազմում է ընդհանուր 2017/2018թթ. ուստարվա ընթացքում հատկացված կրթական տեղերի մոտ 10%-ը: Պետք է հաշվի առնել այն փաստը, որ նշված տեղերի մոտ կեսը բաժին է ընկնում իգական սեռի ներկայացուցիչներին, այսինքն՝ արական սեռի ներկայացուցիչների թիվը, ովքեր ստանում են տարկետում, կազմում է մոտ 1000: Նշված քանակի ուսանողներից միայն մոտ 10%-ն է շարունակում զբաղվել գիտական հետազոտություններով՝ ուսումը շարունակելով ասպիրանտուրայում կամ այլ հետբուհական կրթական հաստատությունում: Այսպիսով, ներկայացված ծրագիրն ունի մի շարք առավելություններ, մասնավորապես՝

- Մագիստրոսական կրթության իրավունք ստանալով այն ոլորտներում, որոնք «2015-2019 թվականներին Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրում» սահմանված վեց գերակա ուղղություններից՝ հայագիտություն, գիտություններ կյանքի մասին, արդյունավետ եւ անվտանգ էներգետիկա, հիմնական արդյունավետ տեխնոլոգիաներ, ՏՏ ոլորտ, խնայողական բնօգտագործում, գիտատեխնիկական եւ սոցիալ-տնտեսական զարգացման կարեւորագույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված հետազոտություններից են, ուսանողը հնարավորություն է ստանում զինվորական ծառայությունը համատեղել արդյունավետ գիտական գործունեության հետ:

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մայիսի 27 -ի նիստի թիվ 20 արձանագրային որոշման «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարություն» հավելվածում որպես թիրախ, ի թիվս այլնի, սահմանվում է հիմնարար եւ կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանումը:

- Ռամզաարդյունաբերական համալիրի զարգացման ուսումնական մագիստրոսական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվող թեմաներն առաջարկվում են ռազմաարդյունաբերական համալիրի պահանջներին համապատասխան, որի շրջանակներում էլ պաշտպանվում է մագիստրոսական ատենախոսությունը:

- Մագիստրատուրայում ուսումն ավարտելուց հետո ուսանողը հնարավորություն է ստանում ուսումը շարունակել նույն ծրագրի շրջանակներում՝ ասպիրանտուրայում, գիտական աշխատանքի թեման համապատասխանեցնելով ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման արդիական պահանջներին:

Ուսումնառության ողջ ընթացքում հետազոտությունների համար տրամադրվող դրամաշնորհները կնպաստեն բազմաթիվ հետազոտությունների, գիտական աշխատանքների իրականացմանը, թույլ կտան կիրառական նշանակության գիտական նորամուծությունները կիրառել հենց տեղում՝ ստանալով շոշափելի արդյունք: Այս ծրագրի գործարկման արդյունքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կդառնան

Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման խթանող ուժ եւ կստեղծվեն հնարավորություններ նոր գիտական կենտրոնների ձեւավորման համար, որոնք կսպասարկեն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախատարության, զինված ուժերի կարիքները՝ ունենալով նաեւ կոմերցիոն զարգացման հեռանկարեր:

6. Օրենքի 24-րդ հոդվածում ամրագրված են այն հիմքերը, որոնց առկայությամբ անձն ազատվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից՝ ընտանեկան պայմաններից ելնելով: Նշյալ հոդվածում առաջարկվում է կատարել լրացում, համաձայն որի՝ եթե հարազատի/ընտանիքի անդամի մահվան պատճառով քաղաքացու մոտ վերանում են տարեկետման հիմքերը, ապա վերջինս զորակոչվում է բանակ, ոչ շուտ քան մահվան մեկ տարին լրանալուց հետո հաջորդող զորակոչը: